


լոր տարբեր տարբեր էին ու ստէպ ստէպ կը փոխուէին . բայց ընդհանրապէս անոնք ալ աւելի արեւելեան ձևի վրայ էին :



Հռովմայ Վրահանայապետաց ընտրութիւնը :

ՀՈՌՎՄԵԱԿԱՆ եկեղեցւոյ արտաքին հռչակաւոր արարողութիւններէն մէկն է պապին ընտրութե հանդէսը . և որովհետև աս տարի ալ եղաւ աս հանդէսը՝ հիմակուան սրբազանին Պիոսի Թ ընտրութեամբը, կ'արժէ որ հոս համառօտ ստորագրութիւնը ընենք :

Յայտնի է որ պապ ընտրողներն են Հռովմէական եկեղեցւոյ ծիրանաւորները, որ հասարակօրէն լատին բառով կարգինալ կ'ըսուին . իսկ իրենց ժողովատեղին կ'ըսուի փակարան, և լատիներէն Conclave: (Ինչպէս որ և իցէ քաղաքի մէջ ալ կրնայ ըլլալ պապերուն ընտրութիւնը (ինչպէս Պիոս է Վ ենետիկի մէջ ընտրուեցաւ), բայց սովորական տեղն է Վ ատիկանի պալատը : Եւ կարգը աս է : Սրբազան պապը վախճանելուն պէս ծիրանաւորաց առաջին փոյթը կ'ըլլայ փակարանին տեղը որոշել, ու վախճանելոյն յուղարկաւորութեան իննօրէքը դեռ չըմբնցած՝ պատրաստած պիտի ըլլայ փակարանը աս կերպով : Ետի մէկ մեծ սրահի մը մէջ մէյմէկ պզտիկ փայտակերտ խուցեր կը շինեն ծիրանաւորաց թուովը, որ եօթանասունէն աւելի չըլլար . աս խուցերը ամէնն ալ առանձին միջոցով բաժնուած են իրարմէ . իւրաքանչիւրը թուանշան ունի՝ ու վիճակով բաժնուած է ծիրանաւորաց : Ըսոնցմէ որոնք որ վախճանած պապէն առած են իրենց պատիւը, անոնց խուցերը դրսէն մութմանուշակագոյն թաւիշով ծածկուած է, իսկ մէկաւնոնցը կանանչ չուխայով :

Փակարանին մէջ եղողները չորս կարգի անձինք են . ա, բուն ժողովա-

կանք, այսինքն ծիրանաւորները . բ, վարդապետք, որ ծիրանաւորաց օգնականներն են . գ, պաշտօնատեսարք, որ գործողութիւնները կը կատարեն . դ, պաշտօնեայք՝ որ ծառայութիւն կ'ընեն :

Վ արդապետներէն մէկը ընտրուած է վերատեսուչ փակարանին, որ հազարապետի պէս կրնայի որ ամէն բան տեղովը առաջ երթայ . ասիկայ ալ իր ձեռքին տակը ուրիշ անձինք ունի : Պաշտօնատեսներուն գլխաւորները ասոնք են . խոստովանահայր մը, քարոզիչ մը, պապին լուսարարը, երկու բժիշկ, մէկ դեղապետ մը . նուիրակապետ՝ որուն ձեռքն են դրսի դրան բանլիքները, ներսիններն ալ գանձապետին ձեռքն են՝ որ է առաջին արարողապետ : Իսկ ծառայողներն են ամէն մէկ ծիրանաւորի երկերկու ծառայ, իսկ հիւանդներուն իրեք իրեք ծառայ . անոնցմէ զատ խոհարարներ, երկու սափրիչ, հիւս, որմնագիր, բեռնակիր, աւելածու և այլն :

Փակարանին ամէն բանը այսպէս կարգի դրուելէն ետքը՝ պապին մահունէն տասը օր վերջը ծիրանաւորները սուրբ Պետրոսի եկեղեցին կը ժողվուին . իրենց մէջէն աւելի պատուաւորը կամ ծերագոյնը՝ պատարագ կ'ընէ՝ ի պատիւ Հոգւոյն սրբոյ, վարդապետաց մէկն ալ՝ յորդորական քարոզ մը կը խօսի նոր քահանայապետին ընտրութեանը վրայօք, ու ետքը մեծ կղերիկոսը պապական խաչը բռնած՝ ծիրանաւորաց առջևէն կ'երթայ . անոնք ալ թափօրով ու մեծ հանդիսով կ'երթան փակարանին մէջի մատուռը . հոն աղօթք մը ընելէն վերջը՝ կը կարդան Վրիգոր ԺԵ պապին սահմանադրութիւնը՝ որ գրած է Հռովմայ քահանայապետաց ընտրութեանը վրայ, ու ամէնն ալ կ'երդուրննան որ պահեն . ետքը նախագահը կարճ յորդորակ մը կը խօսի, ու մէկէն կը մտնեն իրենց խուցերը . հոն ամէն մարդ եկեղեցական թիկնոցը վրան առած կը նստի խուցին պզտիկ պատու-

Հանին դիմացը : Ըն օրը ինչուան ի-  
րիկուն փակարանը բաց մնալով, ե-  
կող գացող անպակաս կ'ըլլայ իրենց  
հետ տեսնուելու, ինչպէս դեսպան-  
ներ, եկեղեցականներ, ւազնուական-  
ներ . բայց գիշերը ժամը իրեք ըլլա-  
լուն պէս՝ դուռը կը գոցուի, ու ալ  
չբացուիր ինչուան որ պապին ընտրու-  
թիւնը լմընայ . միայն թէ որ դրսէն  
նոր ծիրանաւոր մը հասնի՝ կամ ան-  
կարծելի դիպուած մը պատահի, ան  
ատեն կը բանան :

Արհրորդ օրը կը ժողվուին ծիրա-  
նաւորները, ու արարողապետը կը  
կարգայ սահմանադրութեան վճռա-  
կան կանոնները, և միանգամայն կը  
վկայէ թէ օրինաւոր կերպով սկսած  
է ժողովը, ուստի և վաւերական է :  
Սրբոյն Պետրոսի ընտրութիւնը 'ի  
Վրիստոսէ եղած է . նմանապէս իրեն  
յաջորդին սրբոյն Լինոսի ընտրու-  
թիւնը Պետրոս առաքելոյն յանձն-  
արարութեամբը եղեր է . իսկ անոնց  
յաջորդներունը եկեղեցականաց ձեռքն  
էր՝ ինչուան որ 1179 թուականին  
Լատերանու Գ ժողովքին մէջ որո-  
շուեցաւ որ ծիրանաւորք միայն ըլլան  
պապին ընտրողները : Հիմակուան  
ընտրութեան կերպը աս է : Ըրարու-  
ղապետները մատրան սեղանին վրայ  
երկու հատ արծաթէ կանքերու մէջ  
կը պատրաստեն տպած տոմսակներ .  
ետքը իրեք հոգի կ'ընտրուին վիճա-  
կով՝ որ քննիչ կ'ըսուին, իրեք ալ տե-  
ղակալ՝ հիւանդ ծիրանաւորներուն  
կողմանէ : Ըմէն ծիրանաւոր մէյմէկ  
տոմսակի վրայ իր անունը կը գրէ ծա-  
ծուկ լատիներէն այսպէս . “ Լյս (լյս  
անուան) ծիրանաւոր, ընտրեմ զծիրա-  
նաւորն զՏէր (լյս անուան) ” : Տոմ-  
սակը կը ծալէ որոշուած ձևով, ու  
հասարակաց պարզ կնքովը կնքելէն  
վերջը՝ տոմսակը երկու մատովը վեր  
բռնած ամենուն աչքին առջևը՝ այն-  
պէս կ'երթայ սեղանին դիմացը . հոն  
տեղը ծունկ չդրած՝ կարճառօտ ա-  
ղօթք մը կ'ընէ, ու լատիներէն աս  
խոստմունքս կ'ընէ . “ Ա կայ կոչեմ

ինձ զտէր Վրիստոս որ դատելոցն է  
զիս, զի ընտրեցից զոր քստ Ըստուծոյ  
ընտրելին դատեցայց ” : Ըս ըսելէն  
վերջը՝ տոմսակը մէկ մեծ սկիհի մը  
մաղզմային վրայ կը դնէ, որ սեղանին  
վրայ կ'ըլլայ, ու մաղզմայով կ'առնէ  
սկիհին մէջ կը ձգէ : Արբոր ամէնքը  
իրենց տոմսակները կը ձգեն, առա-  
ջին քննիչը կ'առնէ տոմսակներով  
սկիհը, ու մաղզման սկիհին վրայ գո-  
ցած՝ վեր վար կը դարձնէ որ աղէկ  
մը խաւնուին : Ընկէ վերջը երրորդ  
քննիչը կ'առնէ տոմսակները՝ մէկիկ  
մէկիկ կը համրէ և ուրիշ դատարկ  
սկիհի մը մէջ կը լեցնէ : Թի որ տոմ-  
սակներուն թիւը ծիրանաւորներուն  
համրանքէն աւելի կամ պակաս ելլէ,  
բոլորն ալ կ'այրեն ու նորէն կը գրեն .  
իսկ թէ որ ճիշդ ելլէ, ան ատեն ի-  
րեք քննիչ ծիրանաւորները կը բանան  
տոմսակները ամենուն առջին, ու  
թուղթի մը վրայ կը նշանեն միայն  
ընտրուածներուն անունները՝ այս-  
պէս . “ Վերապատիւ ծիրանաւորն (լյս  
անուան) ունի վիճակս (լյս անուան) ” : Եւն :  
Ատքը ան տոմսակները դերձանի մը  
վրայ կ'անցնեն ու ուրիշ դատարկ  
սկիհի մը մէջ կը լեցնեն : Թի որ  
վիճակներուն իրեք մասին երկուքը  
մէկու մը վրայ ելլէ, ընտրութիւնը  
կը լմընայ . ուստի նորէն կը համրեն  
տոմսակներն ու կ'այրեն . իսկ թէ որ  
մէկու մըն ալ չելլէ իրեք մասին եր-  
կուքը, ան ատեն տոմսակները բոլոր  
կը բանան, կը համրեն, գիր կ'անցը-  
նեն, ու կ'այրեն . ան ծիրանաւորներն  
ալ որ ուրիշներու վրայ գրած էին՝  
ան ատենը նորէն տոմսակ կը գրեն,  
որ հասանութիւն (accessus) կ'ըսուի .  
այսինքն անով ամէն ծիրանաւոր հա-  
ւանութիւն կուտայ որ բազմաթիւ  
վիճակ ունեցողներուն մէկը ընտրուի .  
ուստի նոր տոմսակներուն վրայ կը  
գրեն . “ Հաւանիմ ընտրել զգե-  
րապատիւ ծիրանաւորն զՏէր (լյս  
անուան) ” : Թի որ անոնցմէ մէկուն  
վրայ ալ չհաւանի մէկը, ոչ ուրիշ կը  
գրէ : Թիւր լեցուելուն պէս՝ ընտ-

րուողը յայտնի կ'ըլլայ . բայց զգուշու թեան համար՝ որ չըլլայ թէ մէկը իր անունը գրած ըլլայ , բոլոր տոմսակները մէկիկ մէկիկ նորէն կը բացուին ու կը կարգացուին . ան ատեն վիճակով կ'ընտրուին իրեք ծիրանաւոր քննիչներ՝ որ եղած ընտրութեան տոմսակներն ու ամէն պարագաները կը քննեն . թէ որ ճիշդ չգտնեն , հաւանութեան գործողութիւնը նորէն կը սկսի . իսկ թէ որ ըստ կարգի գրանեն ամէն բան , բոլոր տոմսակները կ'այրեն , ու կը հրատարակեն՝ թէ օրինաւորապէս ընտրուեցաւ սրբազան պապը :

Ըն ատեն իրեք արարողապետները կ'երթան ընտրելոյն դիմացը , ու առջինը կը հարցընէ անոր լատիներէն « Յանձն առնուցո՞ւս զօրինաւոր ընտրութիւն քո՝ ի գերագոյն քահանայապետութիւն » : Երբոր անիկայ որոշ ու բացայայտ կերպով հաւանութիւն կուտայ , դիմացինը կը հարցընէ յարգութեամբ թէ ինչ նոր անուն կ'ուզէ դնել իրեն : Եւ յետ արարողապետը մէկէն արձանագրութեան մէջ կը գրէ յանձնառութիւնը՝ ամենուն առջև . ետքը նոր պապը մէջերնին առած՝ կ'երթան մատրան սեղանին դիմացը . հոն սրբազանը ծունկի վրայ եկած՝ քիչ մը աղօթք ընելէն վերջը կ'ելլէ ու ծիրանաւորի զգեստը կը հանէ վրայէն : Ետեկապետը կը բերէ կարմիր թաւիչէ ոտքի ամաններ՝ վրան ոսկեթելով խաչ բանուած , ու կը հագցընէ պապին ոտքը . արարողապետներն ալ իրեն ուրիշ զգեստները կը հագցընեն , այսինքն ազնիւ բեհեզէ պատմուճան , ոսկեփունջ ծուպերով գօտի , վրայէն փիլոնի ձևով ազնիւ նիւթէ զգեստ մը , անոր վրայէն հայրապետական կրկնօցը , գրլուխն ալ կարմիր մետաքսէ գտակ մը : Ընկէ վերջը կ'ելլէ կը բազմի փառաւոր գահի մը վրայ , ու բոլոր ծիրանաւորները կ'երթան կը համբուրեն իրեն ոտքը՝ աջը և ուսերը : Եւ սենեկապետը կը բերէ քահանայապետական մատնին , որ ձկնորսական մատնի կ'ըսուի , ու մատը կ'անցընէ . սարկաւազապետ ըսուած ծիրանաւորն ալ պապին յարգութիւն ընելէն վերջը՝ կ'երթայ պալատին ճակտի մեծ պատուհանը բանալ կուտայ ( որովհետեւ ինչուան ան ատենը հիւսած կը կենայ ) , ու անկէ աւետիս կուտայ ժողովրդեան լատիներէն այսպէս . « Ընտարանեմ ձեզ ուրախութի մեծ , զի ունիմք մեք քահանայապետ զգերապատիւ ծիրանաւորն ( այս անուն ) որ ընկալաւ զանունս ( զայս ) » : Ըս ըսելուն պէս բոլոր քաղքին զանգակները կը զարնուին , թնդանօթները կը նետուին , փակարանին դուռը կը բացուի ու ներս կը մտնեն եկեղեցակահանք , ազնուահանք , դեսպաններ , պաշտօնատեարք տէրութեան և այլն : Ըն ատենը ծիրանաւորները նորէն կը մատչին ի համբոյր ոտից և աջ սրբազանին՝ իրենց հպատակութեան և յարգութեանը նշան :

Ընկէ ետքը նորընտիր պապը սրբոյն Պետրոսի տաճարը կ'երթայ , բոլոր հայրապետական զգեստները հագած ( բաց ի պապական խոյրէն՝ որ հանդիսաւոր օծութենէն վերջը կը դնէ ) ու գահաւորակի վրայ նստած . հոն սրբութեան մատուռին մէջ քիչ մը աղօթք ընելէն վերջը՝ կ'երթայ աւագ խորանին դիմացը կը նստի , ու կը սկսին « Օ քեզ Ըստուած գովաբանեմք » երգը երգել : Ըն ալ լմննալէն վերջը՝ ծիրանաւորք երրորդ անգամ իրենց յարգութիւնը կ'ընծայեն սրբազանին , ու թափօրով կը տանին զինքը իր պալատը : Բանի մը օր ետքն ալ թագադրութեան հանդէսը կը կատարուի :

Ըն ա այսպէս մեծավայելուց կարգով ու փառաւորութիւն կ'ընտրուի հռովմայ քահանայապետը . և ասանկ ընտրուեցաւ աս տարի նաև Պիոս Թ սրբազան պապը , որ յաջորդեց Պրիգորի ԺԶ :